## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

16.06.2021թ
Ե/ 192-2021

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաչատրյան

Ներկայացնում եմ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու թիվ 19-21 որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՓԻԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 19
15 հունիսի 2021թ.

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

Որոշում է.

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2021թ հունիսի 15-ի նիստի օրակարգը:

1. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
2. Սարահարթի համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, վարձակալության տրամադրման ենթակա հողը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Բարիկյան Հարություն | | | |
| Բարիկյան Վահան | | | |

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՎՀՀ 06801657

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ 20
15 հունիսի 2021թ.

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Նվեր Բագրատի Կիրակոսյանի հայտը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Նվեր Բագրատի Կիրակոսյանի սեփականություն հանդիսացող, 06-097-0108-0017 կադաստրային ծածկագրով, 0.571 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը անասնագոմ կառուցելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող անհրաժեշտ փոփոխություններ:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | [signature] | | |
| Բարիկյան Վահան | [signature] | | |

Սարահարթ համայնքի ղեկավար՝ [signature] Ա. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ Սարահարթ 10փ **1նրբ** 21
☎.091 700 667

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N21**

«15 » հունիսի 2021 թվականի

ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ , ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ և 57-րդ հոդվածներով, , ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը,

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն, Սարահարթ համայնքի սեփականությում հանդիսացող ներքոնշյալ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելուն՝ **06-097-0131-0088** կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով 1 լոտով, մեկնարկային գինը սահմանել տարեկան 540 000 / Հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարձակալության տրամադրման ժամկետը մինչև 5 տարի: Մրցույթի մասնակցության վճարը 1000 դրամ, քայլի չափը 30 000 դրամ, նախավճարը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հալաջյան Արթուր | | | |
| Քոթանջյան Վազգեն | [signature] | | |
| Սահակյան Լյովա | [signature] | | |
| Բարիկյան Հարություն | [signature] | | |
| Բարիկյան Վահան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան